# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**5 սեպտեմբերի 2013 թվականի N 127 Ա**

<<ՄԵՂՐՈՒ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետով, 70-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ կետերի դրութեներով, <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 67-68-րդ հոդվածներով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի օգոստոսի 22-ի <<Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը նվազացնելու մասին>> N 878-Ա որոշման 3-րդ կետի պահանջների և 2013 թվականի սեպտեմբերի 3-ի ընկերության N 142 գրավոր առաջարկության, որոշում եմ.

1. Սահմանել, որ <<Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 42048000 (քառասուն երկու միլիոն քառասուն ութ հազար) դրամ, որը կազմում է 8000 (ութ հազար) հատ 5256 (հինգ հազար երկուհարյուր հիսուն վեց) դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) բաժնետոմսեր:

2. Հաստատել <<Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը և դիմել ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստր գրանցում կատարելու:

3. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

***ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ*** ***Վ. ՀԱԿՈԲՅԱՆ***

*2013թ. սեպտեմբերի 5*
*ք. Կապան*